

### ՎԱՀՐԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի, պետության և  
իրավունքի տեսության ամբիոնի մագիստրոս



## ՀԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հեղինակը իր առջև խնդիր է դրել պարզաբանելու հայ կանոնական եկեղեցական ժողովների դերը և նշանակությունը հայ սահմանադրական մշակույթում: Փորձ է արվել հիմնավորելու, որ կանոնական ժողովները կրել են «Սահմանադիր» բնույթ և այդ ժողովներում հաստատված սահմանադրությունները կարևորագույն դերակատարություն են ունեցել 4-13-րդ դարերում հայ հասարակության սոցիալ-տնտեսական և իրավաբանական կյանքում, և որ հայ կանոնական եկեղեցական «Սահմանադիր» ժողովներն են հանդիսացել հայ սահմանադրական մշակույթի ձևավորման սաղմերը:

*Հիմնաբաներ - Սահմանադրություն, հայ կանոնական եկեղեցական ժողով, պետականության վերականգնում, սահմանադրական մշակույթ, հասարակական հարաբերություններ:*

Հայ պատմագրությունը վկայում է, որ դարեր շարունակ հայոց երկիրը չի ունեցել պետականություն, շարունակ տիրել է ներքին երկպառակությունը, պայքարը թագավորական և նախարարական իշխանությունների միջև, որի արդյունքում ամենուր իշխել են անօրինականություններ և իրավունքով չկարգավորվող հասարակական հարաբերություններ, և դարեր շարունակ հայոց երկիրը եղել է օտար պետությունների լծի տակ:

Հայոց եկեղեցին իր գործունեությամբ՝ ժողովներով, ընդունված սահմանադրաիրավական նորմերով, միասնական պետականության պահպանմանն է ձգտել և տարիներ շարունակ ազգային արժեքի՝ պետականության կորստից հետո եկեղեցին իր վրա է վերցրել հայ ժողովրդի ղեկավարումը և օրենսդիր մարմնի, ներպետական մեքենայի գործառույթը և դարեր շարունակ մշակել և ընդունել է կանոններ՝ կարգավորելու հասարակական հարաբերությունները և փորձել վերականգնել պետականությունը: Այդ մասին են վկայում հայոց եկեղեցական ժողովները, որոնք իրավիքով են՝ սահմանելու նորմեր և կարգաբերելու իրավական դաշտը, որոնք ունեցել են սահմանադրաիրավական նշանակություն: Այդ ժողովները դարձել են հայ սահմանադրական մշակույթի ձևավորման հիմնաքարերից մեկը: Հրավիրված ժողովները կրել են սահմանադիր բնույթ՝ կապված դրանց ընդունման ձևի պահպանման, ընդունված նորմերի, դրանց պարտադիրության և նշանակալիության, որոնք գրեթե չեն զիջում իրավական տեսանկյունից ժամանակակից սահմանադրությունների ընդունման կարգին:

Նախքան քրիստոնեության ընդունումը Հայաստանը առաջնորդվել էր ոչ միայն ներպետական սովորույթային իրավունքով, այլ նաև փոխառել է հարևան հզոր պետությունների օրենքները՝ հարմարեցնելով ներպետականին: Այնուամենայնիվ, քրիստոնեության

ընդունմամբ սկսեց ձևավորվել նոր արժեհամակարգ, որով պետք է ձևավորվեր նոր իրավական համակարգ՝ կարգավորելու հասարակական հարաբերությունները և դրանց տալու դիմամիկ ընթացք, և այդ ամենն սկսեց իր տեղը զիջել նոր ձևավորվող արժեհամակարգին՝ իրավունքով սահմանափակվող ներպետական օրենսդրությանը: Հայ եկեղեցական ժողովները ուղղված էին նոր արժեհամակարգի ձևավորմանը, հասարակական հարաբերությունները ներպետական իրավական մշակույթից բխող իրավական օրենքով կարգավորելու գերակայությանը, և տարիների ընթացքում մի շարք եկեղեցական կանոնական ժողովներ ծառայել են իրենց նպատակին, կարգավորել և կարգի են բերել երկրի տնտեսական և քաղաքական կարգավիճակը, որի վառ ապացույցն է հասարակության բոլոր շերտերում այդ սահմանադիր նորմերի կիրառումը՝ որպես հասարակական վարքագծի համընդունելի պարտադիր կանոն, որի արդյունքում էլ հայ եկեղեցական կանոնական ժողովները իրենց սահմանադիր նշանակությամբ հանդիսացել են հայ սահմանադրական մշակույթի ձևավորման հիմնաքարերից մեկը:

Նախ հակիրճ ներկայացնենք «Սահմանադրություն» (Constitutio) հասկացությունը, որը լատիներենում նշանակում է հիմնել, սահմանել. հայերենում «Սահմանադրություն» հասկացությունը նույնպես նշանակում է սահմանել, եզրագծել և այլն:

Սակայն ամեն մի «սահմանում» կամ «հիմնում» «սահմանում» կամ «սահմանադրություն» չէ:

Որպես կանոն, սահմանադրության հիմնական բնութագրիչներ հանդիսանում են պետական կարգի հիմունքներ, մարդու, քաղաքացու իրավունքներ ու հիմնարար ազատություններ, իշխանությունների տարանջատում՝ հաշվեկշռում և այլն:

Նոր Հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության հիմքում դնում է «սահմանադր-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

րել» հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես սահման դնել, որոշել, կարգավորել, կարգել, օրինադրել, սահմանել: Այս բոլորն ակնհայտորեն իրենց հիմքում կանոնակարգման, իրավակարգավորման իմաստ են պարունակում[1–14]:

Մեր վերլուծության արդյունքում կփորձենք պարզաբանել, որ հայ եկեղեցական կանոնական ժողովներում ընդունված որոշումները ունեցել են համապարտադիր՝ սահմանային նշանակություն, որով կարգավորվել են և՛ պետական ապարատը, և՛ հասարակական հարաբերությունները՝ կրելով սահմանադրություններին բնորոշ բաղադրիչները:

Սահմանադրական մշակույթը սահմանադիր նորմերով ու սկզբունքներով, փոխհամաձայնությամբ ձեռք բերած հասարակական գոյի ընդհանուր կանոններով ստեղծագործաբար ապրելու մարդկային հանրության արժեքային որոշակի համակարգ է[1–20]: Հատկանշական է այն հանգամանքը, որ սահմանադրական մշակույթում ոչ միայն կարևոր է, թե որքանով է ապահովված հասարակական համաձայնությունը և մարդու սոցիալական արժևորման որոշակի սանդղակը, ինչպես նաև հասարակական հարաբերությունները կարգավորող արժեքային որոշակի սկզբունքները և նորմերի առկայությունը, այլ նաև՝ որքանով են այդ սկզբունքները ընդունվել հասարակության կողմից, ինչպիսի կիրառում են ունեցել և որչափ են կյանքի կոչվել և ունեցել իրենց բացառիկ դերը հասարակական հարաբերություններում:

Կփորձենք նկարագրել հայ եկեղեցական ժողովների՝ որպես սահմանադրական մշակույթի նշանակալիությունը և համապատասխանելիությունը սահմանադրությունների ընդունման չափանիշներին:

*Առաջին.* որքանով են հայ եկեղեցական ժողովները ունեցել «սահմանադիր» բնույթ, հանրային ներկայացուցչական մարմինը որքանով է երաշխավորված եղել, արդյոք պահպանվել են ժողովների «լեգիտիմությունը» և որպես ազգային համաձայնությամբ վարքագծի ընդհանուր կանոնի ընդհանուր մարմինը:

*Երկրորդ.* որքանով են ընդունված նորմերը իրավական, և արդյոք դրանք ունեցել են պարտադիր, գերակա «գորագծային» սահմանադրաիրավական նշանակություն:

Ըստ պատմագրության՝ առաջին պաշտոնական ազգային եկեղեցական ժողովը Աշտիշատի ժողովն է՝ 365թ.-ին Ներսես Մեծի նախագահությամբ հոգևորականների և աշխարհականների մասնակցությամբ[2–259]:

Նշենք, որ այդ դարաշրջանը Հայաստանի համար արմատական վերափոխումների, ինչպես նաև բազմաթիվ դժվարություններով, ներքին և արտաքին թշնամիներով շրջափակված ժամանակահատված էր: Քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունմամբ ամբողջությամբ հեթանոսական մշակութային արժեքները ոչնչացվում էին, փոխարինվում քրիստոնեական կառույցներով: Այս ամենը կատարվեց մի շր-

ջանում, երբ երկու հարևան գերտերությունները՝ Պարսկաստանը և Հռոմը, թշնամաբար էին տրամադրված նոր կրոնի նկատմամբ: Այս առումով Հայաստանը պետք է բավականին հզոր և ինքնուրույն լիներ՝ կարողանալու ապահովել երկրում իրավական դաշտը՝ օրինականությունը, հասարակական հարաբերություններն ու համաժողովրդական միասնությունը: Նշենք, որ այդ ժամանակահատվածում տիրում էր ոչ միայն արտաքին լարվածությունը հարևան պետությունների հետ, այլ նաև ներքին պառակտումները թագավորի և նախարարների միջև:

365թ.-ի Աշտիշատի առաջին եկեղեցական ժողովը դարձավ հայ եկեղեցական ժողովների կազմակերպման հիմքը՝ կրելով «Սահմանադիր» բնույթ և ձևավորելով հայ սահմանադրական մշակույթի սաղմերը:

Մ. Խորենացին նշում է, որ Ռ.Ներսեսը «ժողով արարեալ եպիսկոպոսաց և համօրէին աշխարհական կանոնական սահմանադրությամբ հաստատեաց»[2–259]:

Այստեղ նշվում է, որ Ներսեսի հրավիրած ժողովը, որին մասնակցում էին հոգևորականներ և աշխարհականներ, ընդհանուր համաձայնությամբ սահմանվեցին և հաստատվեցին կանոնական սահմանադրություն, որը կունենար սահմանային՝ եզրագծային, նշանակություն հայ ժողովրդի համար, և հենց այս ժողովը ճանապարհ հարթեց հետագայում եկեղեցական նոր ժողովների հրավիրմանը, որոնցում կընդունվեին նոր սահմանադրաիրավական նորմեր: Հավելենք, որ նմանատիպ ժողովները հրավիրվել են խիստ անհրաժեշտության դեպքում, երբ հայոց երկիրը գտնվել է խիստ օրհասական վիճակում:

Ըստ Մելիք-Թանգյանի՝ «ժողովին հրավիրված էին երկու դասակարգն էլ՝ հոգևոր և աշխարհական. այս փառավոր սկզբունքը, իբրև հիմնական կետ, մեր պատմության մեջ հետագա դարերի բոլոր ժողովներում շեշտելի է այն տեսակետից, որ մյուս եկեղեցիները կարող են նախանձով նայել այս բանիս վրայ և ձգտելով նույն թրություն հանել, քանի որ երկու դասակարգի մասնակցությամբ միայն կարող է վճռել բոլոր եկեղեցական հարցերը և խնդիրները»[2–259]:

Աշտիշատի եկեղեցական կանոնադիր ժողովի ընդունած որոշումները պարունակում էին ոչ միայն կրոնական-եկեղեցական խնդիրները կարգավորող, այլ նաև աշխարհիկ կյանքի ու հասարակական-սոցիալական հարաբերությունները կարգավորող նորմեր: Այնուուհանդերձ Աշտիշատի եկեղեցական ժողովի որոշումները ուղղված էին քրիստոնեության ամրապնդմանը, ինչպես նաև ստեղծելով երաշխիքներ՝ հայ ժողովրդին իր սեփական հայրենիքում հարատևելու և սեփական արժեքներին հավատարիմ մնալու և դրանք զարգացնելու ամբողջականությամբ, այսինքն՝ երկիրը քայքայումից փրկելու գործընթացին, որը բնորոշ է Սահմանադրությանը, ծնունդ է առնում երկրի առջև ծառայած բարդագույն խնդիրների լուծման անհրա-

www.journal.lawinsstitute.am

ժեշտությամբ: Աշտիշատի և մյուս հայ եկեղեցական ժողովները պահպանել են սահմանադրությունների ընդունման կարգը և կանոնները, այսինքն՝ եկեղեցու կողմից ներկայացված Սահմանադիր նորմերը քննարկման առարկա են հանդիսացել հասարակության բոլոր շերտերի կողմից և ընդհանուր համաձայնությամբ կանոնավորել և սահմանվել են բոլորին հավասար իրավական նորմեր:

Ներսես Վրդ. Մելիք-Թանգյանը «Հայոց եկեղեցական իրավունքը» աշխատությունում նշում է, որ «Փավստոսը պատմում է, որ Ներսեսը ստիպում էր ոչ միայն նախարարներին, հապա և թագավորին, որ ճշտությամբ հետևեին այդ կարգերին»[2-260]:

Աշտիշատի ժողովում ընդունված իրավական նորմերը պարտադիր էին հասարակության բոլոր շերտերի համար, այսինքն՝ ընդունվող նորմերը ունեին սահմանային նշանակություն բոլորի համար, և այդ իրավական սահմանի հատումը կբերեր տվյալ անձանց համար խստագույն պատիժներ:

Ժողովի հրավիրման անհրաժեշտությունը կայանում էր նաև նրանում, որ քրիստոնյաներին թույլ չտրվեր կատարելու Մովսիսական ծեսերը, որը հակասում էր քրիստոնեական կանոններին և արդեն բավական հին էր: Այնուամենայնիվ, այստեղ ոչ միայն խոսքը գնում էր Մովսիսական ծեսերի մասին, որոնք հակասում էին քրիստոնեական վարքին ու բարքերին, այլ նաև որոշակի սովորությանին իրավունքի նորմերին, որոնք արդեն հնացել էին և չէին կարգավորում որոշակի հասարակական հարաբերությունները: Խնդիրը կայանում էր նրանում, որ գործող նորմերը պետք է կատարելագործվեին և նոր ընդունվող իրավական օրենքների հետ միասին կյանքի կոչվեին՝ իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունները դարձնելով առավել դինամիկ և ժամանակին համընթաց, քանի որ կյանքը զարգացող իրողություն է, և գործող իրավական նորմերը պետք է զարգանան և գործեն ժամանակին համընթաց:

Աշտիշատի ժողովում հաստատված հայ իրավական մտքի ավանդույթը զարգացրեց Շահապիվանի ժողովը, որը, ըստ պատմագրության, հրավիրվել է 444-447թթ.: Ըստ վարդապետ Ներսես Մելիք-Թանգյանի՝ Շահապիվանի ժողովը հայոց ամենափառավոր ժողովներից մեկն է[2-263]: Շահապիվանի ժողովի ներկայացուցչական կազմը նկարագրված է հետևյալ կերպ. «Եվ հավաքվեցին 40 եպիսկոպոսներ ու բազում քահանաներ, սարկավազներ, նախանձախնդիր ծառայողներ և սուրբ եկեղեցու ամբողջ հոգևորականությունը, բոլոր իշխանները՝ գավառների կառավարիչներ, գավառների ղեկավարներ, գերագույն դատավորներ, գանձապետներ, գորապետներ, հազարապետներ, գեղջվազներ, տարբեր շրջանների ազատներ»[4-121]: Շահապիվանի ժողովի հրավիրումը, ունեցել է իր հստակ նպատակը:

Ըստ Ներսես Մելիք-Թանգյանի՝ ամբողջ Տիեզերական քրիստոնյա ժողովների մեջ այսպիսի փառա-

վոր ժողով չի եղել. բոլորը միաձայն դիմում էին ժողովի ղեկավարներին. «Սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի, Մաշտոցի դրած (կանոնները) կարգերը Հաստատեցեք և մենք ախորժելով յանձն ենք առնում, առաքելական և Նիկիական կանոնները Հաստատուն մնան մեզ համար», և ինչ որ ի լրումն այս կանոնների անհրաժեշտ է, միասին սահմանենք[2-264]: Ըստ Ներսես Մելիք-Թանգյանի՝ ժողովին մասնակցել են նաև Վասակ Մարզպանը, Վահան Հազարապետը, Վարդան Մամիկոնյանը:

Սահմանադրությունների ընդունումը Սահմանադիր ժողովի կողմից իրականացվում է երկու եղանակով. ա) Սահմանադիր ժողովը միաժամանակ մշակում և ընդունում է Սահմանադրությունը՝ տվյալ դեպքում ըստ էության կատարելով խորհրդարանի դեր: Մասնավորապես, այդ եղանակով են ընդունվել ԱՄՆ 1787թ. Սահմանադրությունը (Ֆիլադելֆիայում՝ Ազգային կոնվենտի կողմից), Ֆրանսիայի 1848թ. Սահմանադրությունը՝ Ֆրանսիայի սահմանադիր ժողովի կողմից և այլն, բ) Սահմանադիր ժողովը միայն մշակում է սահմանադրության նախագիծը, որը որպես կանոն ընդունվում է հանրաքվեի միջոցով[7-1056]:

Հայ եկեղեցական կանոնական սահմանադիր ժողովների հրավիրման ընթացակարգը հանդիսանում է վերոնշյալում թվարկված սահմանադրությունների ընդունման առաջին ձևի նախատիպը, այսինքն՝ հայ եկեղեցին դարեր շարունակ իրականացրել է օրենսդիր իշխանության քաղաքականությունը՝ իրեն վերապահելով Սահմանադիր ժողովների հրավիրման գործառույթը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սահմանադրությունները, ունենալով ընդունման և փոփոխման հատուկ կարգ, ԱՊՀ մի շարք երկրների, այդ թվում ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածով սահմանվում է. «Սահմանադրությունն ընդունվում կամ փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ»[8-58]: Շահապիվանի կանոնական ժողովում առանձին նշվում է, որ բոլորը միաձայն դիմում էին ժողովի ղեկավարներին, որպեսզի վերականգնվի Սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի, Մաշտոցի ընդունած կանոնները, որոնք հաստատվել են հանրային ներկայացուցչական մարմնի կողմից, և այս դեպքում նույն կերպ փորձում էին փոփոխել և հաստատել հին ու նոր սահմանադիր կարգերը, և ահա պարզ է դառնում, որ այդ ժամանակներում ևս իրականացվել է սահմանադրությունների ընդունման և փոփոխման հատուկ կարգ, որը հանդիսանում է ժամանակակից սահմանադրական մշակույթում սահմանադրությունների ընդունման և փոփոխման կարգի նախատիպը:

Աշտիշատի ժողովում ընդունված որոշումները իրենց լեգիտիմությամբ՝ հանրային ներկայացուցչական մարմնի ապահովմամբ, չեն զիջում ներկա ժամանակներում համանման նորմերի ընդունման կարգին: Ընդունված նորմերը բոլորի համար պարտադիր էին և

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

կոչված էին պահպանելու ազգային արժեքները, երաշխավորելու ազատությունը պահպանելու հնարավորությունը և ստեղծելու անճողոպրելի որոգայթ բոլոր վատթար մարդկանց համար:

Շահապիվանի ժողովում ընդունված դատաստանագրքի բովանդակությունից երևում է, որ այն ընդունվել է ոչ միայն երկրի ծանր վիճակը բարելավելու, այլև քրիստոնեական հավատքը ամրապնդելու նպատակով[3-79]: Եվ դա բնական է, քանի որ ժողովը գումարվեց պատմական մի ժամանակահատվածում, երբ Պարսկաստանը իրականացնում էր դավանափոխության քաղաքականություն:

Ըստ պատմագրության այդ ժամանակահատվածը Հայաստանի համար ծանր շրջան էր. ամենուր տիրում էր անհանդուրժողականությունը: Հայոց թագավորությունը վերացել էր, երկիրն ընկել էր օրհասական վիճակի մեջ, տիրում էր պարսիկ և ասորի հոգևորականների անբարո արարքները, ամենուր տակնուվրա էր արվում, բացակայում էին հայ իրավական ավանդույթներից բխող իրավունքով ղեկավարվող հասարակական հարաբերությունները, և փոխարենը տիրում էին օտար օրենքները. ամենուր ոտնահարվում էին հայ հասարակության իրավունքները: Ամենուր չէին հարգվում հայ ժողովրդի դարավոր բարքերը, տիրում էին արժեհամակարգի շփոթ, դավաճանություններ, անօրինություններ և այլն: Գրված էր ազգային էթնիկական խնդիր, որը վտանգում էր հայ ժողովրդի հավատը, պետականությունը և ինքնությունը: Այս արժեքները փրկելու համար է, որ հրավիրվում է Շահապիվանի սահմանադիր ժողովը՝ կանոններ հաստատելու և դրանց չկատարման համար խիստ պատիժներ սահմանելու:

Պատմության դասերը վկայում են, որ սահմանադրությունների ծնունդը որպես կանոն առաջ է գալիս երկրի առջև ծառայած բարդագույն խնդիրների լուծման համար[5-191]: Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել հինգերորդ դարի առաջին կեսերին. կանոնական ժողովում հաստատված նորմերը ուղղված էին երաշխավորելու պետականությունը, կարգավորելու երկրի իրավական համակարգը և ապահովելու պետության կայուն դինամիզմը:

Համանման իրավիճակ էր ստեղծվել 1990-ական թվականներին, երբ տեղի ունեցավ ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ մի շարք պետություններ, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, գտնվում էին արմատական վերափոխումների ճանապարհին: Նախապես օրենսդիր անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել ազգային խառնվածքին և հետապնդվող նպատակին համապատասխան հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, որը կոչված էր ապահովել հայ ժողովրդի ազատ, ինքնիշխան, բնականոն և բարեկեցիկ ապրելակերպը:

Եվ ահա այս սահմանադիր ժողովում հաստատված կանոններով էր, որ պահպանեց և երաշխավորեց երկիրը քայքայումից՝ հաստատելով իրավունքով սահմանափակվող պետականություն:

Կանոնական եկեղեցական ժողովներով հարս-

տացած ավանդույթը խթան հանդիսացավ հետագայում նոր ժողովի հրավիրմանը, բայց այս անգամ ոչ թե նախաձեռնողը ազգային եկեղեցին էր, այլ հինգերորդ դարի վերջում՝ Վաչագան թագավորը: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվեմում, որը կայացավ մարերի (մայիս) ամսի տասներեքին»[6-65]: Արդյունքում հաստատվեց մի փաստաթուղթ, որն անվանվեց «Սահմանադրություն կանոնական», և այն հայոց սահմանադրական մշակույթում հաստատվեց որպես Աղվանքի արքա Վաչագանի կանոնական սահմանադրություն:

Ըստ պատմագրության՝ հիշատակվում է, որ ժողովը հրավիրվել է 488թ-ին:

Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կանոնական սահմանադրության հաստատումը իրականացվել է հետևյալ ընթացակարգով և եզրափակվում հետևյալ դրույթով.

«Այս պայմանները թագավորի ներկայությամբ դրեցին եպիսկոպոսներ, քահանաներ, ազնվականներ: Այս հրամանը մատանիներով կնքեցին արքայի հրամանատար Մուծիկը, պալատի վերակացու Միրհորիկը և տոհմապետեր Մարութը, Տիրագորը, Սպարակոսը, Ղամանը, Բակուրը, Ռատանը, Արչեսը, Գարդմանստեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզը, Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները, և գրության ավելի վավերական լինելու համար կնքվեց նաև Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով»[6-69]:

Կանոնական սահմանադրության՝ մատանիներով կնքելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ամրագրված նորմերը համապարտադիր լինեին բոլորի համար, և հասարակական լայն շերտերի համաձայնության արդյունք հանդիսացող ու գերակա բնույթ կրող այս կանոնական սահմանադրությունը օժտված լիներ բարձրագույն իրավաբանական ուժով:

Հինգերորդ դարի կեսերին անհրաժեշտություն էր առաջացել ձևավորելու այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք կկարգավորվեին իրավական օրենքներով, որի ժամանակ տիրում էր ուժի իշխանությունը հատկանշական է այն հանգամանքը, որ հասարակական հարաբերությունները պետք է կարգավորվեին հրապարակային հասարակության տարբեր շերտերի կողմից հավանություն ստացած և հաստատված կանոնական սահմանադրությամբ, և կարևոր է այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում հասարակության մեջ առաջացած անիրավությունը ամենից առաջ փորձում էին հաղթահարել իրավունքով, այլ ոչ թե թագավորի հրամանով կամ այդ ժամանակահատվածին բնորոշ այլ միջոցներով: Այս գործունեությունը հաստատում է այն, որ նախաձեռնողները օժտված են եղել իրավագիտակցության բարձր որակներով:

Խնդրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ անընդհատ նշվում է սահմանադրություն բանը. նրանում հաստատված կանոնները հասարակության մեջ պետք է վերականգնեին բնական իրավունքի զգացողությունը և կյանքի կոչեին իրավունքով սահմանափակվող հանրային հարաբերությունները:

Հաստատված կանոնները բնորոշվում են որպես սահմանադրություն՝ դրանց տալով հատուկ կարգավիճակ, որը ընդունվել էր հասարակության գրեթե բոլոր շերտերի համաձայնությամբ և օժտված էր մյուս նորմատիվ իրավական ակտերից ավելի բարձր իրավաբանական ուժով:

Աշտիշատի, Շահապիվանի և Ադվենի սահմանադիր ժողովները հրավիրվել են իրավունքով սահմանափակվող հասարակական հարաբերությունները կանոնակարգելու նպատակով: Ժողովները ապահովել են համանման որոշումների ընդունման կարգի համապատասխան ձևաչափերը և մեթոդները՝ հանրային ներկայացուցչականությունը, հրապարակային քննարկումը և հաստատումը, լեգիտիմությունը և գաղափարաբանական հստակ ուղղվածությունը:

Սահմանադիր այս ժողովների գործընթացը շարունակվեց նաև հետագայում՝ դրանց հաջորդելով Գլինի VI-IX-րդ դարերի կանոնական ժողովները, որոնցից հատկանշական է 648թ-ին հրավիրված կանոնական ժողովը, որտեղ նշվում է. «Գլուինի այս ժողովը նշանավոր է նրանով, որ կազմեց դավանաբանական ձեռնարկ՝ տարբեր իր մշակութային ձևով նախկիններից, և երկրորդ՝ սահմանեց եկեղեցական կանոններ»[2-318]:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ընդունվող նորմերը հիմնվում էին նաև նախկինում ընդունված իրավական ակտերի վրա, այսինքն՝ հաշվի էր առնվում ազգային ներպետական իրավական մշակույթը և ավանդույթները՝ դրանք դարձնելով դիմամիկ և ժամանակին համընթաց, ինչպես որ կատարվում է ժամանակակից իրավական մշակույթում: Ներսես Շինողի նախագահությամբ հրավիրված կանոնական ժողովը նույնպես ապահոված է եղել հանրային ներկայացուցչականությունը և հանրային քննարկումը. մասնակցել են նաև նախարարները. այնտեղ նշվում է մասնավորապես. «Ստորագրում են բոլոր աշխարհական և հոգևորական ժողովականները և կնքում են իրենց մատանիներով ու յանձնում կաթողիկոսին ի պահպանություն»[2-319]: Այս ընթացակարգով ընդունված նորմատիվ ակտերը հաստատում են այն մասին, որ այն ունեցել է համապարտադիր և գերակա սահմանադրաիրավական բնույթ և նշանակություն:

Ժամանակի ընթացքում հրավիրվել են նաև մի շարք եկեղեցական ժողովներ, մասնավորապես՝ Պարտավի (771 թ.), Սիսի (1243 թ.), Չազավանի (1268 թ.), Երուսաղեմի (1651 թ.):

Առանձնակի ուշադրության են արժանի 1204թ-ի Սիսի ժողովի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները, որի որոշումները մերժվել են ավելի քան երկու

անգամ, որ ապահոված չի եղել ազգային ընդհանուր ժողով և լեգիտիմություն[2-363-364]:

Վերոնշյալում նշվեց, որ ժամանակի ընթացքում մի շարք եկեղեցական ժողովներ են գումարվել, բայց «պաշտոնական կանոններ սահմանող» ժողովներ հրավիրվել են եզակի, ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում և ունեցել են համաժողովրդական բնույթ:

Իրավական արժեքանության (աքսիոլոգիայի) տեսանկյունից սահմանադրական մշակույթի ի հայտ գալը պայմանավորված է նրանով, թե որքանով են «սահմանադիր» հարաբերություններն իրավականորեն արժևորվում, դառնում վարքագծի համընդունելի կանոն, անկախ նրանից՝ սովորության զրկություն ունեն, թե հանդես են գալիս որպես համապարտադիր վարքագծի սահմանված կանոն[1-23]:

Այնուամենայնիվ, դարերի ընթացքում իրականացված հայ կանոնական սահմանադիր եկեղեցական ժողովները իրականացրել են ազգային գերակա հանրային շահ հետապնդող գործառույթ, որի նպատակն է եղել ներպետական օրենսդրությունից բխող իրավահարաբերությունների կարգավորում՝ սահմանադրությամբ սահմանելու և եզրագծելու հասարակական հարաբերությունները՝ ձգտելով իրավունքով սահմանափակվող պետականության:

Հայ կանոնական եկեղեցական սահմանադիր ժողովները սահմանել և երաշխավորել են ժամանակակից սահմանադրական իրավունքի էությունն արտահայտող և իրավունքի գերակայության ուժով ընդունված անհատի, պետության, հասարակական հիմնական օրենքի բովանդակությունը:

Կանոնական եկեղեցական ժողովների գործունեության պատմական ու քաղաքական նշանակությունն այն է, որ այն հզոր ազդակ հաղորդեց իրավունքով կանոնակարգվող հասարակության քաղաքական ու տնտեսական նորացման շարժմանը:

Այսպիսով, մեր վերլուծությունից կարող ենք փաստել, որ հայ եկեղեցական կանոնական սահմանադիր ժողովները անկյունաքարային դեր և նշանակություն են ունեցել հայ սահմանադրական մշակույթի ձևավորման գործում, և այդ ժողովները հրավիրվել և իրականացվել են այնպիսի ընթացակարգով, որի հրավիրման և բնութագրման կարգը հանդիսանում է ժամանակակից սահմանադրությունների ընդունման ձևի նախատիպը՝ հանդիսանալով միջնադարյան հայ իրավական մտքի հուշարձաններից մեկը:

Հոգվածում փորձեցինք հայ եկեղեցական կանոնական ժողովները վերլուծել և հիմնավորել՝ որպես սահմանադիր բնույթ կրող արժեհամակարգ և սահմանադրական մշակույթի կարևորագույն բաղադրատարր:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասեր և ժամանակի մարտահրավերներ, Գ. Գ. Հարությունյան Եր. Նժար, 2005թ., 404 էջ:
2. Հայոց եկեղեցական իրավունքը, Մելիք-Թանգյան Ներսես վրդ., վերահրատարակություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011թ.-848 էջ:
3. Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Ա. Ավանյան, Եր. «Վան Արյան», 2009թ., 340 էջ:
4. Հայ իրավական մտքի գանձարան, Ավագյան Ռ.Հ., Երևան 2001թ., 672 էջ:
5. “Конституционализм-уроки, вызовы, гарантии”, Арутюнян Г.Г., К., Логос, 2011г., 308с.
6. Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի/ թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան 1969թ., 321 էջ:
7. ՀՀ Սահմանադրական մեկնաբանություններ. ընդհանուր խմբագրություն՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Եր., «Իրավունք» 2010թ., 1086 էջ:
8. ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2005 (հատուկ թողարկում), 05.12.2005թ.:

Վաղրամ Գալստյան

Магистр кафедры конституционного  
права, теории государства и права  
юридического факультета ЕГУ

## РЕЗЮМЕ

*Роль и значение армянских канонических церковных собраний  
в армянской конституционной культуре*

Автор поставил перед собой задачу разъяснить роль и значение армянских канонических церковных собраний в армянской конституционной культуре. Была предпринята попытка обосновать, что канонические собрания носили “Конституционный” характер, и конституции, установленные в этих собраниях, имели важную роль в армянском обществе, социально – экономической и политической жизни 4-13-х веков, и что армянские канонические церковные “Конституционные” собрания явились зародышем в формировании армянской конституционной культуры.

**Ключевые слова:** Конституция, армянское каноническое церковное собрание, восстановление государственности, конституционная культура, общественные связи.

Vahram Galstyan

YSU Faculty of Law, Master’s Programme  
Constitutional Law, Theory of Law and State

## SUMMARY

*The role and importance of Armenian canonical church meetings in Armenian constitutional culture*

The author’s aim is to illustrate the role and importance of Armenian canonical church meetings in armenian constitutional culture. An attempt was made to prove that the canonical congregations suffered a “constituent” character and the congregation approved constitutions important role in the 4-13–century in armenian society legal, political, economic and social life, and that the canonical church “constituent” congregations of the armenian constitutional culture in embryos.

**Keywords:** Constitution, the canonical church meeting, state rehabilitation, constitutional culture, public relationship.